

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝  
05.03.2021թ. նիստի N 7 արձանագրություն

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքը :
2. 2020-2021 թ. ուս.տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

05.03.2021թ. կայացած գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 29-ը : ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործըկերներին, հույս հայտնեց, որ հեռավար հարթակում նմանօրինակ նիստը անց է կացվում վերջին անգամ՝ անկնկալելով, որ առաջիկա գիտխորհրդի նիստերը կանցկացվեն առերես :

1. Օրակարգի առաջին հարցին անդրադառնալով Գ.Բարսեղյանը խնդրեց ամբիոնի վարիչներին՝ առավել ուշադիր ու հետևողական լինեն դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքին:
2. 2020-2021 թ. ուս.տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցի հաստատման կապակցությամբ դեկանը նշեց առկա բաժնի I և II ընթացիկ քննությունների մեկնարկի մասին : Երկրորդ կիսամյակի I ընթացիկ քննության մեկնարկը կտվի ապրիլի 5-ից և II՝ մայիսի 5-ից : Հեռակա բաժնու I ընթացիկ քննության մեկնարկը՝ ապրիլի 12-ից և II ընթացիկ քննությունը՝ մայիսի 17-ից :

**Ընթացիկ հարցեր**

- Մ.Ապրեսյանը իր խորին շնորհակալությունը հայտնեց բոլոր ամբիոնների վարիչներին նախորդ նիստում քննարկված՝ արցախցի երեխաներին օտար լեզու ուսուցանելու հնարավորություն տալու հարցը իրագործելու համար: Նա հավելեց, որ ամբիոնի կողմից ներկայացված դասավանդող ուսանողները մեծ եռանդով ու պատրաստակամությամբ են աշխատել երեխաների հետ, իսկ վերջիններս էլ, իրենց հերթին, մեծագույն հաճությամբ ու հետաքրքրասիրությամբ են մասնակցել դասերին :
- ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը իր գործընկերներին շնորհակալություն հայտնեց EXPO -2021-ի շրջանակներում ԵԼՀ ֆակուլտետը լավագույնս ներկայացնելու համար :
- Երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոց. Ա.Սեդրակյանին՝ պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:
- Երաշխավորել ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկնածու Անուշ Ռոստոմի Սեդրակյանին՝ նույն ամբիոնի վարիչի պաշտոնավարմանը դիմելու համար:
- Երաշխավորել տպագրության Ի.Բուռնազյանի, Լ. Բոստանջյանի և Ա. Պապոյանի «Develop Your Listening Skills: Practice and Improve » ուսումնական ձեռնարկը:
- Երաշխավորել տպագրության բ.գ.թ., դոցենտ Հայկանուշ Շարուրյանի «Հիսուսյան վեպերը գրական գուգահեռներում» մենագրությունը:
- Երաշխավորել Ա.Մադոյանի «Անզլերեն քննադատական խոսքի գործաբանական յուրահասկությունները» մենագրությունը տպագրության:
- Երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆ., բ.գ.դ. Տիգրան Մերժիկի Սիմյանի «Երևանский государственный университет: семиотика пространства, интеллектуальный ландшафт, социальная память» մենագրության տպագրությունը,

գիտական խմբագիր հաստատելով պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր **Ալբերտ Անդրանիկի Ստեփանյանին:**

- «Ռումանագերմանական լեզուներ /ֆրանսերեն/» մասնագիտությամբ հեռակա ասպիրանտ Տաթևիկ Նաջարյանին տեղափոխել Արտասահմանյան գրականության ամբիոն, որպես հեռակա ուսուցման ասպիրանտ և թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Ժան Կոկտոյի ստեղծագործական նորարարությունը»** վերնագրով, Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար նշանակել **դոց. Բ.Գ.Թ.Անուշ Ռոստոմի Մեղրակյանին:**

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

Բ.Գ.Թ., դոցենտ`

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոցենտ`  
05.03. 2021 թ.

Գ.Բարսեղյան

Մ.Դավալյան